**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

**ԿՈԼԵԳԻԱ**

---

**ՈՐՈՇՈՒՄ**

7 փետրվարի 2018 թվականի **թիվ 25**

**Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից հաստատվելու կարգի մասին**

**(2018 թվականի օգոստոսի 28-ի խմբագրությամբ)**

**Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից հաստատվելու կարգի մասին**

**Փոփոխող փաստաթղթերի ցանկ**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի օգոստոսի 28-ի թիվ 144 որոշման խմբագրությամբ)***

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 93-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝ Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից հաստատվելու կարգը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված կարգը կիրառվում է 2019 թվականի փետրվարի 1-ից:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի օգոստոսի 28-ի թիվ 144 որոշման խմբագրությամբ)***

3. 2019 թվականի փետրվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել՝

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի օգոստոսի 28-ի թիվ 144 որոշման խմբագրությամբ)***

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը մեկնման վայրում տեղակայված մաքսային մարմնի կողմից հաստատվելու կարգի մասին» թիվ 330 որոշումը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը մեկնման վայրում տեղակայված մաքսային մարմնի կողմից հաստատվելու կարգի մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 282 որոշումը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի «Մաքսային միության հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշ որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 38 որոշման 7-րդ կետը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի «Մաքսային միության հանձնաժողովի եւ Եվրասիական

տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշ որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 129 որոշման 7-րդ կետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2018 թվականի փետրվարի 7-ի
թիվ 25 որոշմամբ

# ԿԱՐԳ

## Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից հաստատվելու

### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը կիրառվում է այն մաքսային մարմնի կողմից «արտահանում» մաքսային ընթացակարգով, «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով, «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով, «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով կամ հատուկ մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների փաստացի արտահանումը հաստատելիս, որի գործունեության տարածաշրջանում իրականացվում կամ իրականացվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից ապրանքների վերջնական մեկնումը (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, մեկնման վայրի մաքսային մարմին), նշված մաքսային ընթացակարգերից որեւէ մեկին համապատասխան ապրանքների բացթողում իրականացրած մաքսային մարմին (այսուհետ՝ բացթողման մաքսային մարմին):

2. Սույն կարգի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

**ապրանքների վերջնական մեկնում՝** Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնում՝ մշտական կամ ժամանակավոր գտնվելու եւ դրա սահմաններից դուրս օգտագործելու նպատակներով, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքների վերջնական մեկնման համար դրանք փոխադրվում (տրանսպորտով փոխադրվում) են Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով եւ (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս.

**էլեկտրոնային չեղարկում՝** էլեկտրոնային հաղորդագրություն, որը պարունակում է տեղեկություններ էլեկտրոնային հաստատումը չեղարկելու մասին.

**էլեկտրոնային փոփոխություն՝** էլեկտրոնային հաղորդագրություն, որը պարունակում է տեղեկություններ էլեկտրոնային հաստատումը ճշգրտելու մասին.

**էլեկտրոնային հաստատում՝** Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրություն.

**էլեկտրոնային ընթացուղի՝** Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով եւ (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրման (տրանսպորտով փոխադրման) առնչությամբ իրականացվող «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների ժամանակավոր մեկնումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրություն.

**էլեկտրոնային հարցում՝** էլեկտրոնային հաղորդագրություն, որը պարունակում է ապրանքների այն հայտարարագրից տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ հարցում, որին համապատասխան ապրանքները ձեւակերպվել են մաքսային ընթացակարգով.

**էլեկտրոնային պատասխան՝** էլեկտրոնային հաղորդագրություն, որը պարունակում է էլեկտրոնային հարցման պատասխանը ապրանքների այն

հայտարարագրից տեղեկությունների նշմամբ, որին համապատասխան ապրանքները ձեւակերպվել են մաքսային ընթացակարգով:

Սույն կարգում օգտագործվող մյուս հասկացությունները կիրառվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված իմաստներով:

3. Սույն կարգի կիրառման նպատակներով՝ կենտրոնական մաքսային մարմիններ ասելով հասկանում ենք՝

Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե.

Բելառուսի Հանրապետության համար՝ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտե.

Ղազախստանի Հանրապետության համար՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտե.

Ղրղզստանի Հանրապետության համար՝ Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայություն.

Ռուսաստանի Դաշնության համար՝ Դաշնային մաքսային ծառայություն:

4. Էլեկտրոնային հաղորդագրությունների ձեւավորումը եւ ուղարկումն իրականացվում են Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) մաքսային մարմինների կողմից՝ անդամ պետությունների մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի միջոցով:

5. Անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակումն իրականացվում է անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի մակարդակով՝ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ:

6. Մեկ անդամ պետության մաքսային մարմինների միջեւ էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակումն իրականացվում է այդ անդամ պետության մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ:

7. Այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը սույն կարգի 1-ին կետում նշված մաքսային ընթացակարգերին համապատասխան, իրականացնում է Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների հավաքագրում եւ մշակում, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդագրությունների հիման վրա, ինչպես նաեւ Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով եւ (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս այդ ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) առնչությամբ իրականացվող «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների ընթացուղով անցնելու մասին տեղեկությունների հավաքագրում եւ մշակում:

## II. Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը հաստատելու կարգը

8. Մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձը՝ մաքսային, այլ փաստաթղթերի եւ (կամ) տեղեկությունների ստուգման ձեւով մաքսային հսկողություն իրականացնելու ժամանակ էլեկտրոնային հարցում է ձեւավորում, որը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

ա) ապրանքների այն հայտարարագրի գրանցման համարը, որին համապատասխան ապրանքները ձեւակերպվել են սույն կարգի 1-ին կետում նշված մաքսային ընթացակարգերից որեւէ մեկով.

բ) էլեկտրոնային հարցումը ձեւավորած՝ մեկնման վայրի մաքսային մարմնի ծածկագիրը՝ մաքսային մարմինների այն դասակարգչին համապատասխան, որը կիրառվում է համապատասխան անդամ պետությունում.

գ) էլեկտրոնային հարցումը ձեւավորելու ամսաթիվը.

դ) էլեկտրոնային հարցումը ձեւավորելու ժամը.

ե) էլեկտրոնային հարցումը ձեւավորած պաշտոնատար անձի անձնական համարակալված կնիքի համարը (բացի Հայաստանի Հանրապետությունից).

զ) էլեկտրոնային հարցումը ձեւավորած պաշտոնատար անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում) (Հայաստանի Հանրապետության համար).

է) էլեկտրոնային հարցումը ձեւավորած պաշտոնատար անձի պաշտոնը (Հայաստանի Հանրապետության համար):

9. Սույն կարգի 8-րդ կետի «բ» - «է» ենթակետերում նշված էլեկտրոնային հարցման վավերապայմանները ձեւավորվում են մեկնման վայրի մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի միջոցով ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չեն:

10. Ձեւավորված էլեկտրոնային հարցումը մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ուղարկվում է այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգ, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը:

11. Այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը, իրականացնում է հարցվող տեղեկատվության որոնում եւ (դրա առկայության դեպքում) ձեւավորում է էլեկտրոնային պատասխան, որը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

ա) ապրանքների այն հայտարարագրի գրանցման համարը, որի առնչությամբ ուղարկվել է էլեկտրոնային հարցումը.

բ) բացթողման մաքսային մարմնի ծածկագիրը՝ մաքսային մարմինների այն դասակարգչին համապատասխան, որը կիրառվում է համապատասխան անդամ պետությունում.

գ) ապրանքն ուղարկողը՝ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերին համապատասխան.

դ) նշանակման երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան.

ե) տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթի ծածկագիրը՝ մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան.

զ) տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթի համարը.

է) տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթի ամսաթիվը.

ը) այն տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը, որում Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայր ժամանելիս (այսուհետ՝ սահմանին գտնվող տրանսպորտային միջոց) պետք է գտնվեն ապրանքները՝ տրանսպորտի եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան.

թ) մեկնման վայրի մաքսային մարմնի ծածկագիրը՝ մաքսային մարմինների այն դասակարգչին համապատասխան, որը կիրառվում է համապատասխան անդամ պետությունում.

ժ) սահմանին գտնվող տրանսպորտային միջոցի գրանցման համարը.

ժա) մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի հերթական համարը.

ժբ) մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի դասակարգման տասնանիշ ծածկագիրը՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ).

ժգ) մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի նկարագրությունը.

ժդ) մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի համաքաշը (կգ) (առանց բեռնարկղերը եւ այլ տրանսպորտային սարքավորումներ հաշվի առնելու).

ժե) ապրանքի համաքաշի (կգ) մնացորդը:

Եթե մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքն ավելի վաղ չի արտահանվել Միության մաքսային տարածքից, ապա նշվում է համաքաշի արժեքը:

Եթե մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքը Միության մաքսային տարածքից արտահանվում է մի քանի խմբաքանակով, ապա նշվում է ապրանքների հայտարարագրում նշված՝ համաքաշի արժեքի եւ այդպիսի ապրանքների հայտարարագրի վերաբերյալ ստացված էլեկտրոնային հաստատումներում նշված՝ համաքաշի արժեքների հանրագումարների, ինչպես նաեւ այն ապրանքների համաքաշի արժեքների հանրագումարների տարբերությանը հավասար արժեքը, որոնց մասով գրանցվել է ժամանակավոր մեկնումը:

Եթե մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքը Միության մաքսային տարածքից ամբողջությամբ է արտահանվել, ապա նշվում է «0» արժեքը.

ժզ) մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի զտաքաշը (կգ).

ժէ) լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը՝ չափման միավորների դասակարգչին համապատասխան, եթե ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան այդ ապրանքի նկատմամբ կիրառվել է լրացուցիչ չափման միավոր.

ժը) ապրանքի քանակը՝ լրացուցիչ չափման միավորներով, եթե ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան, այդ ապրանքի նկատմամբ կիրառվել է լրացուցիչ չափման միավոր.

ժթ) ապրանքի մնացորդը՝ մաքսային ընթացակարգով ձեւակերպված լրացուցիչ չափման միավորներով:

Եթե մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքը Միության մաքսային տարածքից ավելի վաղ չի արտահանվել, ապա նշվում է ապրանքի քանակը՝ լրացուցիչ չափման միավորներով:

Եթե մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքը Միության մաքսային տարածքից արտահանվում է մի քանի խմբաքանակով, ապա նշվում է ապրանքների հայտարարագրում նշված՝ լրացուցիչ չափման միավորներով ապրանքի քանակի արժեքի եւ այդպիսի ապրանքների հայտարարագրի վերաբերյալ ստացված էլեկտրոնային հաստատումներում նշված՝ լրացուցիչ չափման միավորներով ապրանքի քանակի արժեքի հանրագումարների տարբերությանը հավասար արժեքը:

Եթե մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքը Միության մաքսային տարածքից արտահանվել է ամբողջությամբ, ապա նշվում է «0» արժեքը.

ի) բացթողման մաքսային մարմնի այն ապրանքի վերաբերյալ որոշումը, որի մասին տեղեկությունները հայտագրված են ապրանքների հայտարարագրում՝ մաքսային մարմինների կողմից ընդունվող որոշումների դասակարգչին համապատասխան.

իա) հայտագրված մաքսային ընթացակարգի երկնիշ թվային ծածկագիրը՝ մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգչին համապատասխան.

իբ) ծանոթագրության մեջ նշվում է՝

«0»՝ եթե մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքն արտահանվել է ամբողջությամբ.

«1»՝ եթե մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքն արտահանվել է ոչ ամբողջությամբ:

12. Այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողում, ապրանքների հայտարարագրից տեղեկություններ է տրամադրում միայն այն ապրանքների առնչությամբ, որոնց վերաբերյալ բացթողման մաքսային մարմնի կողմից կայացվել է հետեւյալ որոշումը՝ «Բացթողումը թույլատրված է»: Բացթողման մաքսային մարմնի կողմից մեկ այլ որոշում կայացնելու դեպքում այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը, որի մաքսային մարմինն այդպիսի որոշում է կայացրել, ձեւավորում է էլեկտրոնային պատասխան, որը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

ա) ապրանքների այն հայտարարագրի գրանցման համարը, որի առնչությամբ ուղարկվել է էլեկտրոնային հարցումը.

բ) բացթողման մաքսային մարմնի ծածկագիրը՝ մաքսային մարմինների այն դասակարգչին համապատասխան, որը կիրառվում է համապատասխան անդամ պետությունում.

գ) մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի հերթական համարը.

դ) մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի դասակարգման տասնանիշ ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան.

ե) մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի նկարագրությունը.

զ) բացթողման մաքսային մարմնի այն ապրանքի վերաբերյալ որոշումը, որի մասին տեղեկությունները հայտագրված են ապրանքների հայտարարագրում՝ մաքսային մարմինների կողմից ընդունվող որոշումների դասակարգչին համապատասխան:

13. Ձեւավորված էլեկտրոնային պատասխանն ինքնաբերաբար ուղարկվում է մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձին

էլեկտրոնային հարցումն ստանալուց հետո 5 րոպեից ոչ ուշ այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի կողմից, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը:

14. Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը հաստատելու համար մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձը ձեւավորում է էլեկտրոնային հաստատում, իսկ սույն կարգի 31-րդ կետի առաջին պարբերության մեջ նշված դեպքում՝ էլեկտրոնային ընթացուղի, որը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

ա) ապրանքների հայտարարագրի գրանցման համարը (էլեկտրոնային պատասխանի մեջ տեղեկատվության առկայության դեպքում համարը ձեւավորվում է ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չէ).

բ) մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի հերթական համարը.

գ) ապրանքի դասակարգման տասնանիշ ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան (նշվում է առանց բացատների) (էլեկտրոնային պատասխանի մեջ տեղեկատվության առկայության դեպքում ծածկագիրը ձեւավորվում է ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չէ).

դ) ապրանքի նկարագրությունը (էլեկտրոնային պատասխանի մեջ տեղեկատվության առկայության դեպքում տեղեկությունները ձեւավորվում են ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չեն).

ե) ապրանքի համաքաշը (կգ) (առանց բեռնարկղերը եւ այլ տրանսպորտային սարքավորումներ հաշվի առնելու):

Եթե տվյալ վավերապայմանի արժեքը գերազանցում է էլեկտրոնային պատասխանի մեջ նշված՝ համաքաշի մնացորդի արժեքը, ապա մեկնման վայրի

մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձին տեղեկացնում է այդպիսի գերազանցման եւ սույն կարգի 19-րդ եւ 20-րդ կետերով նախատեսված մաքսային գործառնություններ իրականացնելու անհրաժեշտության մասին.

զ) լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը (առկայության դեպքում)՝ չափման միավորների դասակարգչին համապատասխան.

է) ապրանքի քանակը՝ լրացուցիչ չափման միավորներով (առկայության դեպքում):

Եթե տվյալ վավերապայմանի արժեքը գերազանցում է էլեկտրոնային պատասխանի մեջ նշված արժեքը, ապա մեկնման վայրի մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձին տեղեկացնում է այդպիսի գերազանցման եւ սույն կարգի 19-րդ ու 20-րդ կետերով նախատեսված մաքսային գործառնություններ իրականացնելու անհրաժեշտության մասին.

ը) մեկնման ժամանակ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթի ծածկագիրը՝ մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան.

թ) մեկնման ժամանակ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթի համարը: Եթե տրանսպորտային (փոխադրման) փաստաթուղթը չունի համար, ապա կատարվում է «ա/հ» նշումը.

ժ) մեկնման ժամանակ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթի ամսաթիվը: Եթե տրանսպորտային (փոխադրման) փաստաթուղթը չունի ամսաթիվ, ապա տեղեկությունները չեն նշվում.

ժա) սահմանին գտնվող տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը՝ տրանսպորտի եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան.

ժբ) սահմանին գտնվող տրանսպորտային միջոցի գրանցման համարը.

ժգ) ապրանքի մեկնման ամսաթիվը (Միության մաքսային տարածքից մեկնման համար թույլտվություն ձեւակերպելու մասին որոշում կայացնելու ամսաթիվը) (ձեւավորվում է ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չէ).

ժդ) ապրանքի մեկնման ժամը (Միության մաքսային տարածքից մեկնման համար թույլտվություն ձեւակերպելու մասին որոշում կայացնելու ժամը) (ձեւավորվում է ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չէ).

ժե) Միության մաքսային տարածքից ապրանքի մեկնման համար թույլտվության գրանցման համարն ըստ մեկնման մատյանի.

ժզ) մեկնման վայրի մաքսային մարմնի ծածկագիրը՝ համապատասխան անդամ պետությունում կիրառվող մաքսային մարմինների դասակարգչին համապատասխան (ձեւավորվում է ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չէ).

ժէ) ծանոթագրության մեջ նշվում է՝

«0»՝ եթե մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքն արտահանվել է ամբողջությամբ.

«1»՝ եթե մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքն արտահանվել է ոչ ամբողջությամբ:

15. Ձեւավորված էլեկտրոնային հաստատումը մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ուղարկվում է այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգ, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը:

16. Մեկնման վայրի մաքսային մարմնի կողմից հարցվող՝ ապրանքների հայտարարագրի գրանցման համարի մասին տեղեկությունների բացակայության

դեպքում այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը, տեղեկացնում է մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձին այդպիսի տեղեկությունների բացակայության մասին:

17. Եթե այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի կողմից, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը, ստացվել է ապրանքների հայտարարագրից տեղեկությունների բացակայության մասին էլեկտրոնային պատասխան, այդ թվում՝ Միության իրավունքի մաս կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան՝ ապրանքների հայտարարագրի էլեկտրոնային տեսակի բացակայության պատճառով, ինչպես նաեւ եթե էլեկտրոնային հարցում ուղարկելու պահից 5 րոպեի ընթացքում էլեկտրոնային պատասխան չի ստացվել, ապա մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձն Օրենսգրքի 49-րդ գլխով սահմանված կարգով ուղարկում է փաստաթղթերի եւ (կամ) տեղեկությունների պատճենների տրամադրման մասին հարցում, որի պատասխանը բացթողման մաքսային մարմնի կողմից պետք է տրամադրվի հնարավորինս կարճ ժամկետներում, սակայն նշված հարցումն ստանալու պահից 3 ժամից ոչ ուշ:

18. Չնախատեսված հանգամանքներ ի հայտ գալու, այդ թվում՝ մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի խափանումների դեպքում, մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձն էլեկտրոնային փոստի կամ ֆաքսիմիլային կապի միջոցով բացթողման մաքսային մարմին է ուղարկում էլեկտրոնային հարցումից տեղեկություններ պարունակող հարցում:

Բացթողման մաքսային մարմնի պաշտոնատար անձը ստուգում է տեղեկատվությունը եւ էլեկտրոնային փոստի կամ ֆաքսիմիլային կապի միջոցով մեկնման վայրի մաքսային մարմին է ուղարկում էլեկտրոնային պատասխանից տեղեկություններ պարունակող պատասխան, ինչպես նաեւ կցում է բացթողման

մաքսային մարմնի նշումներով ապրանքների հայտարարագրի տեսաներածված (սկանավորված) պատճենները, եթե մաքսային հայտարարագրումն իրականացվել է գրավոր:

Բացթողման մաքսային մարմնի պատասխանն ուղարկվում է մեկնման վայրի մաքսային մարմնից հարցումն ստանալու պահից ոչ ուշ, քան 6 ժամվա ընթացքում, իսկ մինչեւ բացթողման մաքսային մարմնի աշխատանքային ժամը լրանալն առնվազն 3 ժամ առաջ հարցումն ստանալու դեպքում՝ այդ մաքսային մարմնի աշխատանքային ժամի մեկնարկից ոչ ուշ, քան 3 ժամվա ընթացքում:

19. Սույն կարգի 17-րդ եւ 18-րդ կետերին համապատասխան սահմանված ժամկետներում մաքսային մարմնից պատասխան չստանալու, ինչպես նաեւ էլեկտրոնային պատասխանի մեջ ապրանքների մասին տեղեկությունների՝ ապրանքների մեկնման ժամանակ ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հետ հակասության դեպքում, մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրականացնում է մաքսային հսկողություն՝ Օրենսգրքին, Միության իրավունքի մաս կազմող ակտերին եւ (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, այդ թվում՝ ապրանքների հայտարարագրում նշված՝ ապրանքների մասին տեղեկությունների եւ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների ստուգում:

20. Իրականացրած մաքսային հսկողության արդյունքներով մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից կայացվում է որոշում՝ Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար թույլտվության ձեւակերպման եւ ապրանքների հայտարարագրում ու տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում նշված տեղեկությունների հիման վրա էլեկտրոնային հաստատումը ձեւավորելու մասին, կամ մեկ այլ որոշում՝ Օրենսգրքին, Միության իրավունքի մաս կազմող ակտերին եւ (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

## III. Էլեկտրոնային հաստատման ճշգրտումը եւ էլեկտրոնային հաստատման չեղարկումը

21. Այն դեպքում, երբ ապրանքների մեկնման համար թույլտվությունը ձեւակերպելուց հետո էլեկտրոնային հաստատման մեջ եւ այն փաստաթղթերում, որոնք ներկայացվել են Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման նպատակով թույլտվություն ստանալու համար, հայտնաբերվել են տեղեկությունների հակասություններ, այն անդամ պետության լիազորված մաքսային մարմնի պաշտոնատար անձը, որի տարածքում է ապրանքների մեկնման վայրը (այսուհետ՝ լիազորված մաքսային մարմին), էլեկտրոնային հաստատումը ճշգրտելու մասին որոշում է կայացնում՝ նշելով այդպիսի ճշգրտման պատճառը:

22. Լիազորված մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից էլեկտրոնային հաստատման ճշգրտման մասին որոշում կայացնելիս ձեւավորվում է էլեկտրոնային փոփոխություն: Էլեկտրոնային փոփոխությունը ձեւավորելիս թույլատրվում է էլեկտրոնային հաստատման մեջ պարունակող տեղեկությունների ճշգրտում՝ բացառությամբ հետեւյալ տեղեկությունների՝

ա) ապրանքների հայտարարագրի գրանցման համարը.

բ) ապրանքի մեկնման ամսաթիվը (Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար թույլտվություն ձեւակերպելու վերաբերյալ որոշում կայացնելու ամսաթիվը).

գ) ապրանքի մեկնման ժամը (Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար թույլտվություն ձեւակերպելու վերաբերյալ որոշում կայացնելու ժամը).

դ) Միության մաքսային տարածքից ապրանքի մեկնման համար թույլտվության գրանցման համարն ըստ մեկնման մատյանի.

ե) մեկնման վայրի մաքսային մարմնի ծածկագիրը՝ մաքսային մարմինների այն դասակարգչին համապատասխան, որը կիրառվում է համապատասխան անդամ պետությունում:

23. Ձեւավորված էլեկտրոնային փոփոխությունը լիազորված մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ուղարկվում է այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգ, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը:

24. Էլեկտրոնային հաստատման ճշգրտումը կարող է իրականացվել Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման օրվանից 180 օրացուցային օրվա ընթացքում:

25. Էլեկտրոնային չեղարկումը ձեւակերպվում է՝

ա) մեկնման վայրի մաքսային մարմնի կողմից՝ այն դեպքում, երբ Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար թույլտվությունը ձեւակերպելուց հետո Միության մաքսային տարածքի մեկնման վայրը չլքած ապրանքները ենթակա են վերադարձման Միության մաքսային տարածք կամ հանձնելու ժամանակավոր պահպանման.

բ) լիազորված մաքսային մարմնի կողմից՝ ապրանքների հայտարարագրի գրանցման համարը սխալ նշելու փաստը հաստատվելու դեպքում:

26. Մեկնման վայրից մինչեւ Միության մաքսային սահմանի փաստացի հատման վայր տրանսպորտային միջոցի ընթացուղում չնախատեսված հանգամանքներ ի հայտ գալու մասին՝ փաստաթղթերով հաստատված, ինչպես նաեւ սույն կարգի 27-րդ կետի «թ» ենթակետում նշված տեղեկությունները մեկնման վայրի մաքսային մարմնին տրամադրելու դեպքում մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձը ձեւավորում է էլեկտրոնային չեղարկում:

27. Էլեկտրոնային չեղարկումը ներառում է հետեւյալ տեղեկությունները՝

ա) ապրանքների այն հայտարարագրի գրանցման համարը, որի առնչությամբ կայացվել է չեղարկելու մասին որոշումը.

բ) Միության մաքսային տարածքից ապրանքի մեկնման համար թույլտվության գրանցման համարն ըստ մեկնման մատյանի.

գ) էլեկտրոնային չեղարկումը ձեւավորած մաքսային մարմնի ծածկագիրը՝ համապատասխան անդամ պետությունում կիրառվող մաքսային մարմինների դասակարգչին համապատասխան (ձեւավորվում է ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չէ).

դ) Միության մաքսային տարածքից մեկնման համար թույլտվությունը չեղարկելու մասին որոշում կայացնելու ամսաթիվը (ձեւավորվում է ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չէ).

ե) Միության մաքսային տարածքից մեկնման համար թույլտվությունը չեղարկելու մասին որոշում կայացնելու ժամը (ձեւավորվում է ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չէ).

զ) էլեկտրոնային չեղարկումը ձեւավորած պաշտոնատար անձի անձնական համարակալված կնիքի համարը (բացի Հայաստանի Հանրապետությունից) (ձեւավորվում է ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չէ).

է) էլեկտրոնային չեղարկումը ձեւավորած պաշտոնատար անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում) (Հայաստանի Հանրապետության համար) (ձեւավորվում է ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չէ).

ը) էլեկտրոնային չեղարկումը ձեւավորած պաշտոնատար անձի պաշտոնը (Հայաստանի Հանրապետության համար) (ձեւավորվում է ինքնաբերաբար եւ այդ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից ճշգրտման ենթակա չէ).

թ) ծանոթագրության մեջ նշվում է էլեկտրոնային չեղարկման հետեւյալ պատճառներից մեկը՝

ապրանքների հայտարարագրի գրանցման համարի սխալ նշում.

Միության ապրանքների վերաբերյալ ապրանքների հայտարարագրի հետկանչ.

Միության մաքսային տարածք ապրանքի վերադարձ.

օտարերկրյա ապրանքի՝ ժամանակավոր պահպանման հանձնում.

տրանսպորտային միջոցի տեխնիկական անսարքություն.

ապրանքի (ապրանքի մի մասի) կորուստ.

վթար.

անհաղթահարելի ուժի գործողություն (նշելով կոնկրետ հանգամանքը, օրինակ՝ փոթորիկը):

28. Մեկնման վայրի մաքսային մարմնի կամ լիազորված մաքսային մարմնի կողմից ձեւավորված էլեկտրոնային չեղարկումն անհապաղ ուղարկվում է այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգ, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը:

## IV. Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով եւ (կամ) ծովով փոխադրվող ապրանքների՝ Միության մաքսային տարածքից փաստացի արտահանումը հաստատելու առանձնահատկությունները

29. Եթե «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի մեկնումն իրականացվում է այդ ապրանքի՝ Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով եւ (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրման (տրանսպորտային փոխադրման) առնչությամբ, ապա Միության մաքսային տարածքի մեկ մասում տեղակայված մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձը, բացթողման մաքսային մարմնի հետ միասին, առաջնորդվում է էլեկտրոնային պատասխանի մեջ պարունակվող՝ մեկնման վայրի մաքսային մարմնի վերաբերյալ տեղեկատվությամբ:

30. Եթե էլեկտրոնային պատասխանի մեջ նշված է բացթողման մաքսային մարմնի հետ միասին Միության մաքսային տարածքի մեկ մասում տեղակայված մեկնման վայրի մաքսային մարմնի վերաբերյալ տեղեկատվությունը կամ, եթե էլեկտրոնային պատասխանի մեջ մեկնման վայրի մաքսային մարմնի վերաբերյալ

տեղեկատվությունը բացակայում է, սակայն միեւնույն ժամանակ տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առեւտրային փաստաթղթերին համապատասխան՝ մեկնման վայրը տեղակայված է բացթողման մաքսային մարմնի հետ միասին Միության մաքսային տարածքի մեկ մասում, կամ, եթե մեկնման վայրի մաքսային մարմնի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, այդ թվում՝ անհրաժեշտ տեղեկատվությունը մեկնման մաքսային մարմին ներկայացված տրանսպորտային (փոխադրման) եւ (կամ) առեւտրային փաստաթղթերում նշված չէ, ապա բացթողման մաքսային մարմնի հետ միասին Միության մաքսային տարածքի մեկ մասում տեղակայված մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրականացնում է սույն կարգի 8-20-րդ կետերում նշված գործառնությունները:

31. Եթե էլեկտրոնային պատասխանի մեջ նշված է բացթողման մաքսային մարմնի նկատմամբ Միության մաքսային տարածքի մյուս մասում տեղակայված մեկնման վայրի մաքսային մարմնի վերաբերյալ տեղեկատվությունը կամ, եթե Միության իրավունքի մաս կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան՝ այդպիսի տեղեկատվությունը բացակայում է, սակայն միեւնույն ժամանակ Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման վայրը՝ ապրանքաուղեկից եւ (կամ) առեւտրային փաստաթղթերի համաձայն՝ բացթողման մաքսային մարմնի նկատմամբ Միության մաքսային տարածքի մյուս մասում է տեղակայված, ապա բացթողման մաքսային մարմնի հետ միասին Միության մաքսային տարածքի մեկ մասում տեղակայված մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձը կատարում է գործողություններ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի

նոյեմբերի 7-ի թիվ 134 որոշմամբ հաստատված՝ «Արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված Եվրասիական տնտեսական միության ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից մեկնման եւ Եվրասիական տնտեսական միության տարածք ժամանման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգին համապատասխան, այդ թվում՝ ձեւավորում է էլեկտրոնային ընթացուղի՝ սույն կարգի 14-րդ կետում նշված տեղեկությունների ծավալով:

Ընդ որում, սույն կարգի 8-20-րդ կետերում նշված՝ վերջնական մեկնող ապրանքների նկատմամբ գործառնությունները կատարվում են բացթողման մաքսային մարմնի նկատմամբ Միության մաքսային տարածքի մյուս մասում տեղակայված մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից:

## V. Հայտարարատուին կամ նրա կողմից լիազորված անձին Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման հաստատումը

32. Այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգում, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը, ապրանքների արտահանման մասին տեղեկատվության բացակայության դեպքում հայտարարատուն կամ նրա կողմից լիազորված անձը՝ Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը հաստատելու նպատակներով՝ էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ներկայացրած՝ ազատ ձեւով հիմնավորված դիմումով դիմում է բացթողման մաքսային մարմին:

33. Պատճառաբանված դիմումի մեջ նշվում են ապրանքների այն հայտարարագրի գրանցման համարը, որին համապատասխան, սույն կարգի 1-ին կետում նշված մաքսային ընթացակարգերից որեւէ մեկով ձեւակերպվել են ապրանքները, մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի հերթական

համարը, մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքի նկարագրությունը, մեկնման վայրի մաքսային մարմնի ծածկագիրը՝ համապատասխան անդամ պետությունում կիրառվող՝ մաքսային մարմինների դասակարգչին համապատասխան:

34. Պատճառաբանված դիմումն ստանալիս բացթողման մաքսային մարմնի պաշտոնատար անձը մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի միջոցով՝

այն գրանցում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

ստուգում է նշված ապրանքների հայտարարագրման փաստը՝ սույն կարգի 1-ին կետում նշված մաքսային ընթացակարգերից որեւէ մեկին համապատասխան.

ստուգում է այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգում, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողում, ապրանքների հայտարարագրի նկատմամբ էլեկտրոնային հաստատման առկայությունը՝ սույն կարգի 8-րդ կետում նշված տեղեկությունների ծավալով էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

35. Էլեկտրոնային հաստատման մասին տեղեկատվության առկայության դեպքում այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողում, բացթողման մաքսային մարմին է ուղարկում էլեկտրոնային հաղորդագրություն՝ սույն կարգի 14-րդ կետում նշված տեղեկությունների ծավալով:

Ստացված տեղեկությունների հիման վրա բացթողման մաքսային մարմինը հայտարարատուին կամ նրա կողմից լիազորված անձին Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկատվություն է ներկայացնում:

36. Էլեկտրոնային հաստատման մասին տեղեկատվության բացակայության դեպքում այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողում, այդպիսի տեղեկատվության բացակայության մասին տեղեկացնում է բացթողման մաքսային մարմնի պաշտոնատար անձին:

37. Էլեկտրոնային հաստատման բացակայության մասին տեղեկատվություն ստանալիս բացթողման մաքսային մարմնի պաշտոնատար անձը մեկնման վայրի մաքսային մարմնի տեղեկատվական համակարգ ուղարկում է էլեկտրոնային հարցում՝ սույն կարգի 8-րդ կետում նշված տեղեկությունների ծավալով:

38. Մեկնման վայրի մաքսային մարմնի տեղեկատվական համակարգն իրականացնում է հարցվող տեղեկատվության որոնում եւ (դրա առկայության դեպքում) բացթողման վայրի մաքսային մարմնի տեղեկատվական համակարգ ուղարկում է էլեկտրոնային հաղորդագրություն՝ սույն կարգի 14-րդ կետում նշված տեղեկությունների ծավալով:

Նշված տեղեկությունները նույնպես ուղարկվում են այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգ, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը:

Ստացված տեղեկությունների հիման վրա բացթողման մաքսային մարմինը հայտարարատուին կամ նրա կողմից լիազորված անձին Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկատվություն է ներկայացնում:

39. Էլեկտրոնային հաստատման մասին տեղեկատվության բացակայության դեպքում մեկնման վայրի մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը բացթողման մաքսային մարմին ուղարկում է էլեկտրոնային հաղորդագրություն, որը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

ա) ապրանքների այն հայտարարագրի գրանցման համարը, որի առնչությամբ ուղարկվել է էլեկտրոնային հարցումը.

բ) ծանոթագրության մեջ նշվում է՝ «Հարցվող տեղեկությունները մեկնման վայրի մաքսային մարմնի տեղեկատվական համակարգում բացակայում են»:

40. Հարցվող տեղեկությունների բացակայության մասին էլեկտրոնային հաղորդագրություն ստանալիս, ինչպես նաեւ մեկնման վայրի մաքսային մարմնի տեղեկատվական համակարգից պատասխանի բացակայության դեպքում, սույն կարգի 38-րդ կետում նշված էլեկտրոնային հաղորդագրությունն ուղարկելու պահից 3 ժամը լրանալուց հետո բացթողման մաքսային մարմնի պաշտոնատար անձը կատարում է հետեւյալ գործողությունները՝

ա) տեղեկատվական համակարգի միջոցով թղթային կրիչի վրա տպում է ապրանքների հայտարարագրի պատճենը եւ ապրանքների հայտարարագրի պատճենի բոլոր էջերի դիմերեսին, ինչպես նաեւ դարձերեսին, եթե այնտեղ կան գրառումներ, կատարում է «պատճենը ճիշտ է» նշումը: Տվյալ նշումը վավերացվում է բացթողման մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով.

բ) պատճառաբանված դիմումի գրանցման օրվանից ոչ ավելի, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում մեկնման վայրի մաքսային մարմին է ուղարկում ուղեկցող նամակը եւ ապրանքների հայտարարագրի վավերացված պատճենը, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի եւ ֆաքսիմիլային կապի միջոցով:

41. Սույն կարգի 40-րդ կետում նշված փաստաթղթերն ստացած մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձը մեկնման վայրի մաքսային մարմնում ուղեկցող նամակը գրանցելու օրվանից 5 աշխատանքային օրից ոչ ուշ կատարում է հետեւյալ գործողությունները՝

ա) Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի մեկնման մասին տեղեկատվության առկայության դեպքում՝

միջոցներ է ձեռնարկում՝ ձեւավորված էլեկտրոնային հաստատումն այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի տեղեկատվական համակարգ ուղարկելու համար, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը.

ապրանքների հայտարարագրի ստացված պատճենի վրա ապրանքների մեկնման թույլտվության համար նախատեսված համապատասխան նշումներ է կատարում եւ «կրկնակի անգամ հաստատված է» գրառումն է կատարում, որոնք վավերացնում է ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով.

բացթողման մաքսային մարմին է ուղարկում ուղեկցող նամակը եւ ապրանքների հայտարարագրի վավերացված պատճենը, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի կամ ֆաքսիմիլային կապի միջոցով.

բ) Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի մեկնման մասին տեղեկատվության բացակայության դեպքում տեղեկացնում է բացթողման մաքսային մարմնին այդպիսի տեղեկատվության բացակայության մասին, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի կամ ֆաքսիմիլային կապի միջոցով:

42. Ստացված տեղեկությունների հիման վրա բացթողման մաքսային մարմինը հայտարարատուին կամ նրա կողմից լիազորված անձին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն է ներկայացնում Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման մասին կամ այդպիսի տեղեկատվության բացակայության մասին: